Իմացեք Ձեր ABCDE ցուցանիշները



A Albuminuria
Ալբումինուրիա
(մեզի թեստ)

B Blood Pressure
Զարկերակային ճնշում

C Cholesterol Խոլեստերին
(արյան թեստ)

D Diabetes Mellitus
Շաքարային դիաբետ
(արյան թեստ)

E eGFR Կծիկային ֆիլտրացիայի
արագություն (ԿՖԱ)
(արյան թեստ)

Ուժեղ երիկամներ

Իմացեք ձեր ABCDE տվյալները՝ սրտանոթային հիվանդությունները կանխարգելելու և ավելի երկար, առողջ կյանք վարելու համար

ABCDE-ն հապավում է, որն օգտագործվում է նկարագրելու 5 հիմնական ցուցանիշներ, որոնք ազդում են սրտանոթային և երիկամային հիվանդությունների ռիսկի վրա: Դրանք շտկվում են հատուկ բուժումների միջոցով, որոնք ուղղված են սրտանոթային հիվանդությունների և երիկամային քրոնիկ հիվանդության կանխարգելմանը, ինչպես նաև առողջ կյանքի տևողության երկարացմանը:

A

Ալբումինուրիա (մեզի թեստ)
Մեզում ալբումինի առկայությունը վկայում է երիկամների ախտահարման մասին և հանգեցնում է երիկամներում հակատարիքային Klotho սպիտակուցի կորստի: Ալբումինուրիան թույլ է տալիս հայտնաբերել և բուժել երիկամային հիվանդությունը նախքան դրանց ֆունկցիայի կորուստը: Այն բուժվում է ալբումինուրիան նվազեցնող դեղամիջոցներով:

B

Զարկերակային ճնշում
Բարձր զարկերակային ճնշումը կարող է հանդիսանալ ինչպես երիկամային քրոնիկ հիվանդության պատճառ, այնպես էլ դրա հետևանք: Այն արագացնում է երիկամների և սրտանոթային համակարգի հիվանդությունների զարգացման ընթացքը: Այն բուժվում է զարկերակային ճնշումն իջեցնող դեղամիջոցներով:

C

Խոլեստերին (արյան թեստ)
Արյան մեջ խոլեստերինի մակարդակի բարձրացումը նպաստում է աթերոսկլերոզի զարգացմանը՝ մեծացնելով սրտանոթային հիվանդություններից մահվան ռիսկը: Այն բուժվում է լիպիդ-նվազեցնող դեղամիջոցներով:

D

Շաքարային դիաբետ (արյան թեստ)
Արյան մեջ գլյուկոզի մակարդակի բարձրացումը թույլ է տալիս ախտորոշել և բուժել նախադիաբետը և դիաբետը: Նախադիաբետը և դիաբետը հանգեցնում են երիկամների և սրտանոթային համակարգի հիվանդությունների: Այն բուժվում է գլյուկոզ—նվազեցնող դեղամիջոցներով:

E

Կծիկային ֆիլտրացիայի արագություն (ԿՖԱ) (արյան թեստ)
Արյան մեջ կրեատինինի մակարդակի բարձրացումը ցույց է տալիս երիկամային ֆունկցիայի նվազում: Երիկամների գործառույթը գնահատվում է կրեատինինով հաշվարկված ԿՖԱ ցուցանիշով: Երիկամային ֆունկցիայի նվազումը նշանակում է երիկամային հիվանդություն և հանգեցնում է արագացված կենսաբանական ծերացման: Երիկամային հիվանդությունների դեպքում ի սկզբանե նշանակվում են երիկամ-պաշտպանող դեղեր, ֆունկցիայի կորուստը դանդաղեցնելու համար: Ֆունկցիայի 90% կորստի պարագայում, երիկամների գործառույթը իրականացվում է դիալիզի կամ փոխպատվաստման եղանակով:

strongkidneys@era-online.org

ERA
LEADING EUROPEAN NEPHROLOGY

Ուժեղ երիկամներ